

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ**

Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից գործող հասարակական խորհրդի կազմը համալրելու նպատակով **հայտարարում է** հավակնորդների դիմումների և փաստաթղթերի ընդունման գործընթացի մեկնարկի մասին՝ **2018 թվականի ապրիլի 3-ից**:

Հասարակական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպություններ, գանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն և որոնց մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել Խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

Խորհրդի հավակնորդ անդամները գրավոր կարգով նախարարություն են ներկայացնում դիմում՝ խորհրդի կազմում ընդգրկվելու համար և տեղեկատվություն/ փաստաթղթեր Խորհրդի հավակնորդ անդամին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը հիմնավորելու համար:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ **2018 թվականի մայիսի 3-ը**: Փաստաթղթերը ներկայացվում են ՏԿԶ նախարարություն՝ Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, կառավարական տուն N 3 հասցեով (հեռ. 511360):Կից ներկայացվում է դիմումի օրինակելի ձևը:

ԴԻՄՈՒՄԻ ՕԳԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀՀ տարածքային կառավարման
և զարգացման նախարար

-----ին

կազմակերպության /կազմակերպության անվանումը/

ներկայացուցիչ /անձ/ -----ից
/անուն, ազգանուն/

----- հեռ.

----- էլեկտրոնային հասցե

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն նախարար

Ձեզ ենք ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից գործող հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

Առդիր՝ ----- թերթ:

- 1. -----
- 2. -----
- 3. -----
- 4. -----
- 5. -----
- 6. -----
- 7. -----

-----/ստորագրություն/
/անուն, ազգանուն/

-----/ղիմումի
ներկայացման ամսաթիվ/